# ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԻՆ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ապրիլի 10-ին ընդունել է Իրանի Իսլամական Հանրապետության պատվիրակությանը, որը գլխավորում էր խորհրդարանի նախագահության անդամ Նիա Սոբհանին։

Դրն. Սոբհանին իր և ներկաների անունից շնորհավորանքի ջերմ խոսքեր ուղղեց Նորընտիր Կաթողիկոսին և հույս հայտնեց, որ այսուհետև էլ ավելի կամրապնդվեն հարևան երկու ժողովուրդների հոգևոր և տնտեսական կապերը։ Մեծահարգ հյուրը Գարեգին Վեհափառին հանձնեց Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Ռաֆսանջանիի ողջույնի ուղերձը։ Ողջույնի ուղերձ հանձնվեց նաև Իրանի հայոց թեմի առաջնորդ Արտակ արքեպիսկոպոս Մանուկյանի անունից։

Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց ջերմ մաղթանքների և ուղերձների համար ու իր հերթին հավաստիացրեց, որ այսուհետև հայ և պարսիկ ժողովուրդների կյանքում կբացվի բարեկամության մի նոր էջ։ Կրոնների տարբերությունը երբեք չպետք է խոչընդոտի հարևան ժողովուրդների երկխոսությանը, ընդգծեց Նորին Սուրբ Օծությունը։

Պատվիրակության կազմում էին Հայաստանում Իրանի արտակարգ և լիազոր դեսպան Համիդռեզա Նիքբար Էսֆահանին, ԻԻՀ խորհրդարանի անդամ Վարդան Վարդանյանը և արտգործնախարարության ներկայացուցիչ Ջավադ Քուչոյանը։